



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԲԵՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ ԶՄԻՌՆԻՒՆ ԾԱԲԱԹ 27 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1875 ԹԻՒ 1030

Ինչպէս մեր նախընթաց բոլոր խոստացեալ եմք, առաջին կայսերական նոր հրովարտական ամբողջական օրագրին, գործ. Պայտ ՓՈՒՆԶ Իրագրին: Այս վեճակետական բարձր հրովարտական ամբողջական մեծագործ Պայտանին իւր բրիտանացի մանկավարժական օրագրական վերայ ունեցած մարտիրոսական առատագործ զգացմանց նոր ապացոյցն, որոյ համար պարտաւոր եմք երախտագետ լինել յորոք սրտէ:

ԲԱՐՁՐԱՇՈՒՐ, ԵՆԱՅԻՆ, ՎԵՋԻՐԴ ԻՄ ՄԱՀՄՈՒՏ ՆԵՏԻՄ ՓԱՇԱ:

Ամեն քաղաքակիրթ տէրութեանց առաջին զորքը՝ ժողովրդական իրաւանց ապահովութեան իրենց ըլլալով, այս սկզբան պահպանութեանն յարատեւութեան միջոցները՝ համայն ժողովրդեան համար արդարութիւնն տնտեսի գործարարելով և կառավարութեան մէջ օրինապէս խորհրդով կը գոյանան: Անհատական ամեն ինչ ու օգուտը ապահովել հայրենեաց բարեկարգութեամբն ու շինութեամբը միայն կարելի է: Վասնզի անհատական ապահովութիւնն ու ինչպէս հասարակաց ապահովութեան ու շահուց տեսրտ առնչութիւն ունին:

Մեր գահակալութեան հետէ բոլոր աշխարհի պատրասեալ կայսերական օգուտէս դիտարկութեանցս ու բաղձանացս նպատակն է՝ օգուտեւ ծառայել Աստուծոյ մեր տէրութեան պատիւը բարձրացունելով, և մեր հպատակաց անդորրութիւնը յարատեւութեան մէջ պահելով, յապաքանութեան գործը՝ որ մեր երկրին և տէրութեան հարստութիւնն ու շինութիւնը կը բարձրացնէ, կատարելութեան հասցունել: Մեր օրն բարի փափաքն ու կամքը առաւել ևս արգիւնաւորելու համար հանրութեան ապահովութիւնը կատարելապէս երաշխաւորող և մեր ամեն կարգի հպատակաց պատկանող բարեկարգութեանց որոշումն ու հրատարակութիւնը յարմար տեսանք, և կը հրամայեմք, որ հետեւեալքն օրինաց կարգը անցնին և ի գործ դրուին ընդհանր ամենազօրին Աստուծոյ:

Հպատակաց և իրաւանց ապահովութեան էական տարբերքն են, դատական իշխանութեան՝ գործադիր իշխանութեան միջամտութեան, և օրինաց տրամադրութեանց՝ ամեն տեսակ զեղծմանքներէ ազատ մնալը: Հասարակաց վստահութիւնը գրաւելու համար՝ դատարանաց միայն կազմութիւնը բաւական չէ, այլ հարկ է որ անոնց գիւտանքներն ու անդամներն ալ ձեռնհաս, համեստ, բարեբարոյ և արդարասէր անձինք ըլլան: Աւասիկ մեր յայտնած սկզբանց համաձայնող արդարութեան կեդրոնատեղի մը հիմնելու նպատակաւ կազմուած է Արդարութեան ատենը (Տիւանը—Ահքեմը—Ատիլէ): Հետեւաբար պէտք է վերոյիշեալ սկզբանց համեմատ կազմութեանց և պաշտօնավարութեանց և զանազան ճիւղերուն համար իրական բարեկարգութիւն ընել: Ինչպէս որ դատարանաց անկողնակալութիւնն ապահովել նոյա գործառնութիւնը վարչականէն զատելով կը ըլլայ, նոյնպէս ալ դատարանաց պաշտօնեաներն՝ հասարակաց կատարեալ վստահութեան արժանանալու համար, պէտք չէ որ առանց պատճառի պաշտօնանկ ըլլան և փոխուին: հերիք է որ նոյա ընտրութիւնը արժանաւորութեամբ եղած ըլլայ: Արդ՝ քաղաքական դատարանաց (մէհաքիմը նիզամիյէ) ամենէն բարձրագոյնը մեհաքիմը՝ դատարանը (մահքէմէի թէմիլը) ըլլալով, կը հրամայեմք որ անոր նախարարութեան իրաւասութեանն առնուելով, երկու ճիւղի բաժանուի, մէկմէկ առաջին և մէկմէկ երկրորդ նա-

խագահ դրուելով: Նմանապէս, առեւտրական պաշտօնատան վերաքննութեան ատենն (Տիւանը իսթինաֆ) ու դատարանները՝ դատական նախարարութեան իրաւասութեան ենթարկուին, և առեւտրական նախարարութիւնը (թիւմարէթ նէզարէթի) իւր բուն պարտաւորութեան պատկանող վաճառականութեան, արհեստից և հողագործութեան բարգաւաճման գործադրութեան յատկանայ: Եւ այս կերպով առեւտրական պաշտօնատան վերաքննութեան ատենին և եղեւնագատ ժողովոյն (Տիւանը Տիւանիթ) պաշտօնները արդարութեան ատենին ճիւղն եղող վերաքննութեան դատարանին վրայ յաւելնալով, սոյն վերաքննութեան դատարանը պատժական խնդրոց և իրաւանց դատարան և առեւտրական գործոց յատկացեալ երեք ճիւղի վերածուի և թէ ասոնց և թէ վճռալից դատարանին համար նորէն նախագահներ և անդամներ ընտրուին, որք պէտք է կատարելապէս օրինաց հմուտ անձեր ըլլան: և յետ այսուրի կ'օրհանոր կերպիւ ընտրեալ դատարանաց անդամները՝ ըստ իւրեանց վարմանց առանց բանաւոր պատճառի պաշտօնանկ չըլլալը տրամադրող կայսերական հրովարտակ (Պէրաթ) տրուի իրենց, և պաշտօնէ դադարման (թէգայիւտ) թոշակի իրաւանց յատուկ կանոնադրութիւն մ'ալ հաստատուի: Արդարութեան ատենին գրութեան մասին եղած սոյն կարգադրութիւնը ուրիշ պատճառ չունի, այլ միայն քաղաքական դատարանաց ճիւղերուն կարգադրութեամբը դատական գործոց լաւ տեսչութիւնը ապահովելու և յարատեւել տալու նպատակաւ եղած ըլլալով, կուզեմ, որ սոյն կարգադրութիւնը՝ կայսերական երկրին մէջ գանուող, և՛ արդարութիւնն ու իրաւունքը գործադրելու և հրատարակելու պաշտօն ունեցող դատարանաց վերայ ալ տարածուին: Ուստի, ասոնց կազմութիւնն ու ընտրութիւնը հասարակաց անխտահութիւն չըբերելու և կառավարութեան ազդեցութեան տակ չմնալու համար, թէ այս դատարաններուն և թէ վարչական (իտարէ) ժողովներուն կտրուելիք մահմէտական և ոչմահմէտական անդամաց և Միւսթիֆիկներուն ընտրութեան իրաւունքը՝ առ հասարակ ժողովրդեան շնորհեցինք: Հետեւաբար, կը հրամայեմք որ ամեն կողմ բացառապէս հրահանգներ զրկուին, որ պէտքի ատենք անմիջապէս ի գործ դրուին, և կուսակալութեանց կեդրոնները գտնուող Նախիպները վճռալից ատեններուն (Տիւանը թէմիլը) նախագահելով՝ վճռալից ժողովոց (մէհաքիմի թէմիլը) նախագահութեանց պաշտօնին կոչուին արժանաւորք և նահանգադիրաց (իվլաներու) ու չրվանակադիրաց (գազաներու): Շէրիի դատարաններէն տրուած վճռոց Շէրիի նկատմամբ վերաքննութիւնն ալ սոյն կեդրոնական Նախիպներուն յանձնուի: և որովհետեւ ընդհանրապէս դատարանաց հաստատութեան նպատակը՝ հասարակաց իրաւանց ապահովութեանն ասհմանել է, ուստի մահմէտականաց՝ քրիստոնէից և այլ ոչմահմէտականաց զանազան կրօնքներու հետեւողաց հետ ունեցած դատական խնդիրները, ինչպէս նաև քրիստոնէից իրարու կամ այլ ոչմահմէտական կրօնքէ եղողներուն մէջ տեղի ունեցած դատարար՝ քաղաքական ատենաներուն (մէհաքիմը նիզամիյէ) յանձնուին: և դատարանաց գործառնութեանց կարգադրութեան մասին իմ հրամայած կանոններս յրացունելով՝ անյապաղ ի գործ դրուին: Միանգամայն դատարանաց մասին ամենէն աւելի նկատելու արժանի կէտերն՝ դատական խնդրոց մէջ օրինաց անխնդիր գործադրութիւնն ու իրաւանց տէրե-

րուն զրկանքէ պաշտպանութիւնն են: մանաւանդ պատժական դատարաններու մէջ կը պարտաւորին՝ հաստատեալ իրողութիւնները օրինաց տրամադրութեանց համաձայնեցնելու ու շարժելու ընել, որպէսզի ոչ ոք չբանաւարկուի առանց վճռոյ, և բռնութեան ու խոչտանգանաց տեղի չտրուի: Հետեւաբար հրատարակուի, որ թէ մէկուն հակառակ վարմունքը և օրէնքը չարաչար գործածած ըլլալը հաստատուի, խիստ պատժոյ պիտի ենթարկուի: և ընդ սմին ծանուցուի, թէ հասարակաց իրաւանց ապահովութիւնն ու պահանջուած արդարութեան անխնդիր գործադրութիւնը՝ իմ տիրական կամքն է: Ժողովրդեան իրաւանց ապահովութեան խնդրոյն ամենակարեւոր մէկ կէտն ալ արքունի տըրոց բաշխման և հաւաքման գործը արդարութեան համաձայնեցնելն է: իրաւ է որ գանձուն բոլոր հասոյթները կառավարութեան պատկանէրն եղող վարչական և զինուորական ծախուց փոխարէն սահմանուած են, և թէ մեր երկրին հարստութեան աղբիւրներէն երբ օգուտ քաղուի և քաղաքակրթութիւնն ու շինութիւնը բարգաւաճի, մեր հասութիւց ալ ստուարանալու միջոցներն մտածել հարկ կը ըլլայ, սակայն մեր կամքն է թողուլ այն տեսակ հասոյթներն, որք ժողովրդեան անձկութիւն կը պատճառեն՝ առանց ապահով չափ մ'ընծայելու գանձուն: Որովհետեւ առհասարակ մեր կայսերական հպատակաց տուած տուրքն և ներքին բուսական զանազան տեսակներէ բաղկացեալ ըլլալով՝ բաշխման և հաւաքման անկանոն վիճակ մը յառաջ կը բերէ, կը պատուիրեմք որ յիշեալ տուրքերը միայնեւ եղանակ մը սահմանուելով անմիջապէս գործադրուի, որպէսզի ժողովրդը նեղութենէ ազատի, և միանգամայն գանձուն օրինաւոր չափն ալ ապահովի:

Տասնորդական տրոց վրայ երբեմն յաւելեալ քառորդ մասին պահանջումը վերջերս թէպէտ շնչեցինք բոլորովին, սակայն պէտք է որ վարձակալաց (միւլթէզիմ) միջոցաւ այս տրոց հաւաքուելուն առթիւ անդի դատած հարստահարութեանց, և միանգամայն երկրագործին ու գանձուն եղած փնտներն բառնալու համար տակաւին ամենազգու միջոցը ի գործ դրուին:

Եւ որովհետեւ մեր ժողովրդեան ուղղակի վճարելիք արոց հաւաքումն ալ որ առանձին պաշտօն մ'ըլլալու է, դաւառաց մէջ ոստիկանութեան իշխանութեան յանձնուելուն պատճառաւ անպատեհութեանց տեղի կուտայ, կը հրամայեմք, որ հաւաքութեան գործը ոստիկանութեան պաշտօնէն զատուելով՝ մահմէտական և ոչմահմէտականներէ ընտրեալ հաւատարիմ և վստահելի անձինք նշանակուին, և յատկապէս տրուելիք հրահանգաց համեմատ ասոնց միջոցաւ հաւաքուի արքունի տուրքը: Մեր այս հաստատուն կամքն անյապաղ ի գործ պիտի դրուի, որպէսզի թէ հաւաքման գործը և թէ գանձուն իրաւունքը ապահովի:

Առհասարակ մեր կայսերական կառավարութեան հպատակաց վերաբերեալ խնդրոց մէկն ալ անշարժ ստացուածոց սեպականագրերուն բարեկարգութիւնն է: Թէ մայրաքաղաքիս և թէ դաւառաց մէջ զանազան տեսակ տրուելուն, և շատերն ալ բնաւ չունենալուն պատճառաւ՝ դատարանաց զբաղմունք և ի փնտս հասարակաց դժուարութիւնը և վէճեր տեղի կունենան, որով անշարժ ստացուածոց յարգը կը խախտուի: Այս վիճակը բարեւերելու համար, ընդհանուր սեպականագրերը տալու յատուկ կեդրոնատեղի սահմանուած է արքունի Տէֆթէրխանէի վերատեսչութիւնը: Ուստի ամեն

Այս խորհրդի նպատակն պիտի լինի կառու-
րելագէտ և անմիջական կերպով ի գործ դնել
օսմանեան բոլոր կայսերութեան մէջ զընդհա-
նուր բարեկարգութիւնն՝ զհրատարակեալն
վերջին կայսերական հրովարտեալ : Յիշեալ
խորհրդոյն նախագահն Մեծ—Եպարզոսն է , և
անդամքն ընտրուեցան մահմէտական և քրիս-
տոնեայ պաշտօնատարներէն . իսկ նախարար-
ներն՝ իրաւամբ , անդամեն նոյն խորհրդոյն :
Վերջիններէն նոր բարեկարգութեանց գոր-
ծադրութեան վերաբերեալ պաշտօնական գըր-
ուածքն՝ այս խորհրդոյն պիտի յուղարկուին ,
որուն յանձնուած է պատասխանել հրամաններ
տալով և յանձնարարութիւններ ընելով ի մա-
սին գործադրութեան նոր բարեկարգութեանց :

Յիշեալ բարձրագոյն խորհրդոյն մշտապէս ան-
դամքն ամեն օր պիտի գումարուին և հոգ պի-
տի տանին փութապէս կարգադրելու իրենց ա-
ռաջտրկուած գործքն : Այլև պարտաւորեալ են
անձամբ հասնել ի վերայ գործադրութեան նոր
բարեկարգութեանց դաւառաց մէջ . ուր շա-
բաթական հսկողութիւն և մշտապէս քննութիւն
անհրաժեշտ հարկ լինելով , վերակացու տեսչաց
խումբ մի կարգադրեցաւ , որոյ անդամք պիտի
լինին ձեռնհաս պաշտօնատարք , և գործադիր
բարձրագոյն խորհրդէն կախումն պիտի ունե-
նան : Եւ այլն և այլն :

Ըստ Կ. Պօլսոյ Պալատի լրագրոյն՝ խօսք կըլինի
ի բարձրագոյն Դուռն վասն մօտաւոր ճանա-
պարհորդութեան բարձրա. Մեծ—Եպարզոսին
ի քանի մի դաւառու ահրաժեշտ , որպէսզի իւր
աչքն տեսնէ և իմանայ թէ ինչ կերպով ի գործ
կըրուին կայսերական վերջին ֆերմանով հրա-
տարակեալ նոր բարեկարգութիւնքն , և ըստ
այնմ անձամբ հրամաններ և հրահանգներ տայ
այս կարևոր գործոյն նկատմամբ :

Ի վարձատրութիւն գործունեայ և հաւատա-
րիմ ծառայութեանց վսե. Տատեան Յարութիւն
Պէլին , որ ինչպէս յայտնի է , արտաքին գոր-
ծոյ նախարարութեան խորհրդական է , Պալայի
բարձր աստիճանն շնորհուեցաւ նմա ի վեհա.
կայսրէն : Այս բարեկարգութիւն , նորին վսե-
մութիւնն պատիւ ունեցաւ օգոստ. Սուլթանին
ներկայանալու . որում իւր խորին երախտագի-
տութիւնն ամենախոնարհաբար յայտնեց վասն
մարդասիրական շնորհին՝ եղբայր ինքեան :

—Մարտիան Օննիկ—Պէլին , որ օգոստափայլ
վարկէ Սուլթանին սեղանաւորն է , Մեծիտիէ
կարգին երկրորդ աստիճանի շքանշանաւ պատ-
ուեցաւ հանդերձ առաջին կարգի երկրորդ
աստիճանի պաշտօնատարութեամբ :

—Նմանապէս հայազգի վաճառական ի Կ.Պօ-
լս մեծա. Ա. Զուռնի էֆէնտին՝ որ Աւստրիոյ հը-
պատակ է , Մեծիտիէ կարգին երրորդ աստիճա-
նի շքանշանաւ պատուեցաւ :

—Բէշտայի նախորդ օսմանեան փոխ—հիւպա-
տոս մեծաշուք Պաղտատեան Օհան էֆէնտին՝
Վենայի դեսպանատան խորհրդոյ երկրորդ
ֆարտուղար կարգեցաւ . երկրորդ կարգի երկ-
րորդ աստիճանի պաշտօնատարութեամբ :

ԱԶԳԱՅԻՆ



ՄԱՆԱԳՈՅԺԻ

Բաղարիս Հայ հասարակութիւնն ցաւալի կօ-
րուստ մի ըրաւ յանցելում շաբաթու .
Մեծարգոյ Մարտիրոս աղան թաղթագեան ,
զինի կարճատե հիւանդութեան միոյ , առ Աս-
տուած փոխեցաւ ի հասակի գրեթէ 68 տանց ,
թողլով ի սուգ արտմութեան զաղնուական ըն-
տանիս իւր : Հանգուցեալն՝ որ ուսումնական ,
կենցաղագէտ և խելացի անձ մի էր , իբրեւ հայր

բաղեղութ՝ օրինաւոր գոտարարութիւն տա-
լով իւր շնորհալի զաւակայր , հազուադիւր բա-
րի յիշատակներ կըթողու ի պատիւ անուան
իւրոյ և ի պարծանս Ազգիս :

Վախճանեցին յուղարկութեան տխուր
հանգէսն՝ զոր կառավարողքը քաղաքիս աստի-
կանութեան խումբ մի , արտաքոյ կարգի փա-
ռաւորութեամբ կատարեցաւ . որում ներկայ
էին գրեթէ բոլոր հիւպատոսք և բաղնիքիս
աղային և օտարազգի երեւելի անձինք :

Ի թղթակցաց մերոց Հնդկաստանի՝ անուղան
ուրեմն ցաւօք սրտի խնամաք զփոխումն առ
Աստուած վաղէմի բարեկամին մերոյ յարգոյ
պարոն Սէթայ Աւետ Սէթեան ի Հօնէ—Քօնի
կղզեղն Ձինաստանի , ուր ի փառաց հասա-
տեալ զընակութիւն իւր հանդերձ ընտանեօք ,
զբաղէր ի տուրխտիկ գործն :

Հանգուցեալն յանկարծահաս ահագին կաթ-
ուածոյ զոհ եղեալ է ի 11 երրորդումն փետրուա-
րի ներկայ տարւոյս , թողլով յանմարտ սուգ
ցաւոյ զբոլոր ընտանիս իւր և զաղգակսն :

Լուսահոգի պարոն Սէթն՝ բարեպաշտ , հիւ-
րասէր և ասպնջական Հայ վաճառական էր՝ մա-
նաւանդ վասն աղգայնոց իւրոց ի Ձինաստան
դիմելոց : Բարեկամ՝ եկեղեցւոյ և եկեղեցակա-
նաց և գրեթէ ամենեցուն , հանգուցեալն որ-
պէս լսեմք , ըստ կարեաց նպատաւանոց եղ-
եալ է շինութեան և պայծառութեան աղգային
եկեղեցեաց ի Հնդկաստան , այսինքն ի Սին-
կափոր , ի Ռանգուն և ի Պոմպա :

Աղաչեմք զԱստուած ընդ արդարս դատել
զհոգի նորա և բարի յիշատակ առնել զՏօրա-
մին զերկուս երիտասարդ որդիս նորա , որոց
յաջողութիւն և կեանս երկարս բարեմաղթեմք
աղգասիրաբար :

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՅԻՆ ԵՒ ՎԵՐՉ ՃԱՌԻ ԳԵՐԱՎ. ԳԱՐԵՐԻԿԻ
Ս. Ս. ԲԵՐԵՅԻՍԿՈՒՅԱՆԻ ԱՎԱԳԵԱՆ 2(1)

Եւ ահա դուք , ով Աստուածաբեալ Հայրապետ,
զնոյն մեր զեկեղեցի նորովս այսուիկ ամրակա-
ռոյց պարտաւ պատասպարեալ հաստարմատ ա-
րարէք : Քանզի ի զարգանալ և ի բարգաւա-
ճել Գէորգեան ճեմարանիս Աստուածայնոյ տես-
չութեանն շնորհիւ և Ձերովք Հայրապետական
խնամք , ապաքն ոչ ևս յաշխարհս այլադեաց
իլցեն որդիք նորոյս խրայելի՝ թեքել կազմել
իւրաքանչիւր զսուսեր իւր և զգերանդի մոա-
ւորական , այլ ի հոյակապս յայս գոտտակերտ՝
իր ի գործարան ամենայն հոգեւորական զինուց
և այլոց պիտոյց աղգիւ և եկեղեցւոյ : Ո՞ր այն
իցէ այնուհետեւ կընմէն Գալանոս , որ կեղծա-
ւորութիւն յոյժ ի տգիտութիւն անձինն խառ-
նեալ՝ ամբաստանութիւն անյարիւս զանարատ
վարդապետութենէ հաւատոց մերոց կուտիցէ ,
կամ ո՞ր այն Լատինահայ աղգուրաց , որ նախանձ
իմն չար ընդ Գալանոսին բերելով՝ հիմնական
ինչ խտիրս ի մէջ արկանել յաւակնիցի ընդ մերս
և ընդ ընդհանրական եկեղեցին ֆրիստոսի (զոր
անհնարին տգիտութեամբ մի համարիցի ընդ-
պապականին աթոռոյ նորաձեւութեանց) , և
կամ ո՞ր այն թուոյցիքն՝ նոր ոմն յարուցեալ կը-
ղեմէն Գալանոս ի մեր իսկ աւուրս , յանգնեա-
ցի յայնժամ չարաբանել այնպէս զմերմէ եկե-
ղեցւոյս առաջի աստուածաբանից արեւելեան
եկեղեցւոյ՝ որպէս նախորդն իւր առաջի արեւ-
մտականին արար : Եւ բնաւ իսկ ո՞ր այն Տուայթ
և Ջարեմպա և Տիթրիկ և յալորդք նոցին հա-
մարձակեցին այնուհետեւ գորովել լուսեբարբար
զգեղեցիկ կարգս աստուածպաշտութեան մերոյ :

Բայց այս չէ շտա՞ վեհափառ Հայրապետ , այլ
և հայկազնեան լեզուս մերոյ պատուականի ճե-
մարանս այս եղիցի կեդրոն յստակութեան և
զանձարան հաւատարիմ անդրժեքի աւանդու-
թեան , և պէսպէս լեզուաց օտարոտեաց ներա-
կրթութեան հետեւողս և նախանձաւորս յաճա-
խեցէ թարգմանչայն մերոց երանելեաց , որք
ի սմին յայտմ քաղաքի և ի տեղւոյ հաւաքեալ
ամբարեալ երբեմն իբր ի շահաստան վայրի զայ-
լալեզու ճիւղութիւնս իմաստնոյն օտարաց ի
մերս զնոսին ընտանաւ փոխաբերեցին :

(1) Տես զնախընթաց քիւն լրագրոյս :

Գարձեալ և ի նոցին իսկ յերապականոյն
աղգաց լեզուս քաջ ներհմտացեալք աշակերտ-
եալքն ճեմարանիս , եկեղեցի ժամանակ զի զմե-
րոց աղգային աւանդից՝ զեկեղեցականայն և
զքաղաքականայ՝ զստոյգ նկարագիրս առաջի
արտայնէ իմաստնոյ նոցին , և ոչ ևս իշխեցէ՝ ոք
ուրեք խրամատս իմն ճամարտութեան ի տառ-
գապատում մատենագիրս մեր արկանել կամ
գտանել , որպէս ոմանք յանգագատոյն և ի հա-
րեանցիկ հնախօղից ժամանակիս , (թէպէտեւ
յաղգայնոցն իսկ մերոց՝ և յայլմէ կողմանէ պատու-
կառելի արանց) , յախուռն կարծիս և կասկա-
ծանս նիւթեցին ի մեր իսկ աւուրս զանկեղծիկ
հաւատարմութենէ առաջնոցն մերոց օրատմա-
գրաց և մանաւանդ զանակնառու ճամարտա-
սիրութենէ և զմանրակրկիտ ընտրողութենէ
քերթողահօրն իսկ մերոյ Մեծին Մովսիսի Թորե-
նացւոյ , և զառաջնորդի նորա զՄար իրայն կա-
տինայ զանգին յիշատակարանն ընդ ստոյգոքս
ինչ և ընդ առասպելախառն կեղծիս՝ այլոց ու-
մանց աննշան աղգաց գրել ոչ զանգիտեցին :

Բայց ես զիտրդ ի սակաւամտնեայ , բանից
տահմանս զօրեցից արդ եօք բովանդակել և զայլ-
ոքն ևս բիւրապատիկ արգասիս բարեաց որոյ ի
ճեմարանէ աստի որոյ Սթուոյդ իրաւամբ բո-
պասէ՝ աղգս մեր և աշխարհէ եկեղեցի , թէ՛ թէ
ոչ այժմիկ՝ վաղվաղակի՝ սակայն՝ անշուշտ զինի
ամաց ինչ անցելոյ՝ սովիմք այսու գոգցես կար-
գաւորութեամբ և սայնպիտեաւ տաժողական
անխօսել խնամարկութեամբ Հայրապետիկ մերոյ
մեծի : Եւ այնժամ՝ ապա լիովին արդարացուցէ
սա զիւրն անուանակոչութիւն՝ այժմէն տեսչայի
և արարժ հնչեցեալ յունկն ամենայն մերաղ-
նեայց , և պանծացի յամն յամայն պապեալ
յոյժ արդարացի և յոյժ պատշաճական բոս իս
վերտառութեամբս , «Գէորգեան ճեմարան մայր
Աթոռոյ սրբոյ էջմիածնի» ի հիացումն կարգեալ
յաւերժարար մերոցն և օտարաց :

Կեցցէ՛ սուրբն Ձերք վեհութիւն՝ օրհնեալ
և բարեբանեալ այսօր ի մէջ և ի բովանդակ
Հայկազեանս գրոհէ բանիւ սաղմոսերգութիւն՝ ե-
թէ «Օրհնեսցի պապ տարւոյ քաղցրութեան
քոյ» : Կեցցէ՛ մինչև ցիսնեբեանի Յոգեղենի գե-
ղայորէն տաճարիս իմաստութեան , և անդք ևս
ընդ դարս յորովս՝ յանմահութիւն կնքեալ դա-
նուն Ձեր և զմեծագործութիւն :

Կ. Պօլսոյ Հայ լրագրաց մէջ ցաւալի սրտիւ
կընթեռնումք զտխուր կացութիւնն աղգային
եկեղեցական վարչութեան , որ գեթաղգաբար
խաղալիկ եղած է անփորձ , չահապէր և անբարի
անձանց : Գեկտեմբերի 12ին տեղի ունեցած աղ-
գային երեսփոխանական կոչուած ժողովոյն նիս-
տը՝ աղմկալի բանակուռութեամբ , բարձրաձայն
աղաղակներով , և իրարու դէմ թնամական
խօսքերով՝ նշանաւոր եղեր է ի գայթակղու-
թիւն ողջամիտ ժողովրդեան :

Ահա , այսպէս վերջացաւ , կըսէ Մաթիս , յիշեալ
աղգային ժողովն , որ մեր երեսփոխանական
տարեդրութեանց մէջ տխուր էլ մի պիտի գրա-
ւէ : Յիշեալ օրագիրն կը յաւելու նաեւ թէ՛
«Քանի որ կայ և կըլինայ Ղալաթիոյ խմբակը ,
աղգին մէջ խաղաղութիւնն և բարեկարգու-
թիւնն անհնարին պիտի լինի» :

—Ամոյս 6ին շաբաթ օրն՝ Կ. Պօլսոյ Բանկալ-
թիի թաղն շինուած ռուսական նոր հիւանդա-
նոցին բացուելու առթիւ նշանաւոր գեղեցիկ
հանգէս մի կատարեցաւ , ուր ներկայ էին Ռու-
սաց դեսպան փեմա. Խյնաթիէլ զօրապետն ,
դեսպանուհին և ուրիշ երեւելի բաղնիքիս հրա-
ւերեալք թէ՛ Հայ և թէ՛ օտարազգի :

Գիտել արժան է որ յիշեալ հիւանդանոցին
հիմնադիրն է թիֆլիսցի բարեճնունդ պարոն Պ.
Շապուրով հարուստ Հայ ազնուականն , որ յա-
մաց հետէ հաստատեալ է ի Կ. Պօլսոյ հանդերձ
իւր աղնիւ ընտանեօքն :

—Կ. Պօլսոյ ամենապա. սրբազան Պատրիարք
Հայրն՝ ամոյս 6ին Ս. Նիկողայոսի տօնախմբու-
թեան առթիւ Ռուսիոյ վսե. դեսպանին այցելու-
թեան գնացեր և բազումսիրով ընդունուեր է :

—Վսե. վահան էֆէնտին , կըսէ Մաթիս , Ար-
դարութեան նախարարի Միւշթէշար անուանե-

լուն առթիւ բարձրաւ կայսրորդի Նուսուֆի Ի-
գէտունն էֆէնտիի ներկայացու և սիրալիր բն-
գունելութեամբ պատուեցաւ:

—Կըլեմէթ թէ՛ Աստաթիանի բարեխնամ Ա-
ռաշնորդ գերաւ տէր Գէորգ Վեհապետեան Ս-
Արքեպիսկոպոսն իւր սովորական ազգասիրու-
թեամբն բարեհաճեալ է հինգ հարիւր ուսու-
նական (այսինքն 2000 ֆրանք) միանգամ և եթ նուիրել
ի նպատակ Գէորգեան ճեմարանի Մայր Աթոռոյ
սրբոյ Էջմիածնի: Բայց յայտնանէ Նորին Սրբազ-
նութիւնն յանձնառու եղեալ է ամեն տարի
300 ուսուցիչ վճարել վասն տարեկան ծախու-
նայի որդեգիր աշակերտի յուղարկելոյ ի նմանէ
ի յիշեալ ճեմարանն:

«Մեք կարծեմք, գրած էինք Արշա-
նորդ թուով թէ Զմիւռնոյ ազգային գործ-
քննականի է ուրիշ միջոցներով կարգադրել
այլ միայն հաշտարար քննիչ մը յուղարկմամբ»:

Այս զրուցածնիս լիովին կը հաստատուի այսօր
քանդի կըլեմէթ թէ մեր վսե կուսակալ Խուր-
շիտ փաշան զինի ընթերցելոյ Պատրիարքարանի
միջոցաւ յուղարկեալ Մեծ—Եպարգոսական
հրամանագիրն և զինի մարդասիրական ուշա-
դրութեամբ լսելոյ զգանգատանս երկպառակ-
եալ երկուց կողմանց, յորոց մին այսինքն Մահ-
մանադարապահ կուսակցութիւնն իսկզբանէ ան-
տի արդարատէր հաշտարար քննիչ մը կենդէր
յազգային Պատրիարքարանէ (որ մերժեց զինդիւր
նորա), և այսօր յակամայից բռնադատեալ Բ-
Դրան միջոցաւ կըլեմէթ քննիչ մը, մեր վսեմա-
կուսակալն կըլեմէթ, խոստացաւ մարդասիրա-
բար գրել առ Բարձրագոյն Գուռն ի մասին
յուղարկման ազգային քննիչի մը որոյ արդարա-
մէք ջանիւք և մեր բարեգութ վայելին շնորհին
քաջայայտ եմք թէ քաղաքիս ազգային ցաւալի
երկպառակութիւնն վերջապէս պիտի կարգա-
դրուի եզրադրութեամբ:

Բայց մինչև ի կատարեալ իրադրութիւն
այս բարեւեր տնօրէնութեան, Նորին վսեմա-
թիւնն հարկ համարեցաւ որ քաղաքիս Առաջ-
նորդարանէն վերջոյն ազգային տուհարքն
տեղական իշխանութեան քովն աւանդ մնան:
Հետեւեալ մեր վսե կուսակալին հրամանն սի-
րով ի գործ գրուեցաւ և կնքեալ արկղն ազ-
գային տուհարցն յանձնեցաւ Ն. վսեմութեան:

Զեմք մոռնար յաւելցնելու թէ վսեմա- կու-
սակալն ըստնուս նայելով աւելի օգտակար
համարեալ է որ գալու քննիչն աշխարհական լինի
քան թէ եկեղեցական: ուստի կարծեմք թէ
այս մտք պիտի գրուի ի Նորին վսեմութեանէ
առ Բարձրագոյն Գուռն: յորմէ բնականաբար
նոյնպիսի ազգարարութիւն պիտի լինի ազգային
Պատրիարքարանին Կ. Պոլսոյ:

Չարդ և իցէ, կըբարեմադթեմք ի բոլոր
սրտէ, որ մեր վսե բարեգութ վայելին մարդա-
սիրական հաշտարար ջանքն արդիւնաւոր վախ-
ճան մի ունենան ի բարեկարգութիւն Զմիւռ-
նոյ ազգային տխուր գործոց և ի վերահաստա-
տութիւն վաղեմի բարի անուան և պատուոյ
Հայ հատարակութեան քաղաքիս:

ՔԱՆԱՅԱՆ ԼԱՌԻՔԻ

Զմիւռնիա, 27 Դեկտեմբեր:

Շարժում առջի երկու օրերն առատ ձիւն
դալէ և ստաիկ ցուրտ ընելէ ետեւ, մթնոլոր-
տը մեղմացաւ, հարաւային օդը սկսաւ տիրել
և անպակաս անձրեւ կուգայ: Ուստի ջերմա-
չափն զինի մինչև ի զրոյ իջնելու, այսօր ութ
տոտիճան կընշանակէ զրոյն վերայ:

—Տեղական կառավարութեան և կաղի ընկե-
րութեան մէջ նոր դաշնագրութիւն մի եղաւ:
որով փոխանակ 520 լապտերաց, յետ այսօրիկ
550 կաղի լապտեր պիտի վարուին:

—Մեր վիլայէթին ընդհանուր կառավարիչ
վսե Խուրշիտ փաշան անցեալ կիրակի գիշերն
բարեհաճեցաւ ընթերել ի տունն վսեմաշուք
մարդապետ մահտեսի Յակոբ Էֆէնտիին:

—Կ. Պոլսէն կըլեմէթ թէ ճէլալպէյ, Ռամզի
էֆէնտի և Վասֆի Էֆէնտի, որոց Բարձրագոյն
Դռնէն յատուկ պաշտօն արտօնեցաւ հսկել ի վե-

րայ գործադրութեան նոր բարեկարգութեանց
ի գաւառս Պրուսայի, Ադրիանուպոլսոյ և Եսն-
եայի, արդէն մեկնեցան, իւրաքանչիւրն իւր
պաշտօնատեղն երթալու:

—Մահմէտական ժողովուրդը այսօր Գուռն
Պայրամի տօնախմբութիւնն սովորական հանդի-
սիւ կըկատարէ:

—Գիթաղդարար գողութիւնքն կըշարունակ-
ուին միշտ, և գողերն ու գողցուած բաներն
շատ քիչ անգամ կըգտնուին: Կանցելումն Գա-
ռաթալ գեղին Յունաց եկեղեցին կողոպտուե-
ցաւ: Անցեալ շաբաթ օրն գողերն Այի Իլիայի
նոյն ազգին եկեղեցւոյն մէջէն բոլոր սրբազան
անօթներն վերցուցին՝ առանց մոռնալու ժողո-
վրդապետ քահանային հագուստներն: Երեք-
շաբթի օրն ֆրանկաց թաղն ցորեկ ժամանակ
խեղճ Տաճկի մը մախաղն (հէյալէն) յախշտակե-
ցաւ ի չարագործոց ունեց:

—Մօսիւ Շարլը Մալդանի՝ գաղղիացի վաճա-
ռական և վերառեսուչ Մէսաթէրի Մարիթիմ
ընկերութեան շոգենաւուց՝ պատգամաւոր (տէ-
փիւթէ) ընտրեցաւ ի գաղղիացի վաճառակա-
նաց քաղաքիս:

—Գաղղիոյ ազգային խորհրդանոցն իւր ան-
դամոց մեծագոյն մասին հաճութեամբն ընդ ու-
նելով Եփեսոսի դատական նոր բարեկարգու-
թեանց առաջարկութիւնն՝ որում Եւրոպոյ ա-
մեն տէրութիւնք արդէն իրենց հաւանութիւնն
տուած էին, յիշեալ բարեկարգութիւնքն սկը-
սան ի գործ գրուիլ ի մէկ Յունուարի 1876
ըստ նոր տումարի, և պիտի տեւէ մինչև հինգ
տարի վասն փորձոյ միոյ: Յետ այնորիկ կամ պի-
տի վերանորոգուի և կամ նոր տնօրէնութիւն
մի պիտի լինի:

—Եղիպատի Խըրիվին որդին բարձրադատիւ
Հասան փաշան՝ որում յանձնուած է Հապէշտա-
նի դէմ յարձակելու զօրաբանակին վերին հրա-
մանատարութիւնն, արդէն մեկնեց և Գահրէէն
ի Մոսաւլա երթալու: Յիշեալ զօրաբանակն
բաղկացեալ է զրեթէ ի 15,000 զինուորաց:

—Լը Գար ա'Ալէքսանդրի օրագիրն կըգրէ թէ
յանցելում շարժում մօսիւ Մալդան—Խանն
Գահրէէն Նիւ—Օլիպանդ ոկին մէջ հաջկերոյթ
մի տուեալ է ի պատիւ միտոր վաշպորն պաշտօ-
նատարին՝ որ Ամերիկայի Միացեալ—Նահանգաց
դեսպան է ի փարիզ:

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Ի պատճառս տօնախմբութեանց զանազան
քրիստոնեայ ազգաց՝ այս շաբթու առաւորական
գործառնութիւնքն շատ քիչ եղեն: այսինքն
հազիւ թէ իւր 300 հակ բամպակ վաճառեցաւ:
350—356 զուրուշի մեքենայով մաքրուածք, և
312—315ի Ատանայի բամպակը: Այլի 15
կողով Գառահիսարի ափին վաճառեցաւ 143
զուրուշի չէքին:

ԾԱՆՈԹՅՈՒՄ

Դասաւորութիւնն անգլիարէն լեզուի:

Միտոր վալիէլմն վոյթէրս անգլիացի վար-
ժապետն իմաց կուսայ հայազգի երիտասարդաց
թէ մասնաւոր դասեր կուտայ՝ անգլիարէն սով-
րիլ փափաքողաց: Ո՛վ որ կուզէ աւելի տեղե-
կութիւններ ստանալ, պարտի գիմել ի դրաւա-
ճառի խանութն՝ որ Յունաց Այի—Եօրեի եկե-
ղեցւոյն գիմնոցն է:

ԳԱՂՂԻԱԿԱՆ ԲՕՍԹԱՆ

Որոշեալ նոր գիրք, սկսեալ ի Յունուարէ
1876 ըստ Յիւլիանաց:

Գաղղիա, Գերմանիա, Աւստրիա, Պէլճիզա,
Տանիմարքա, Սպանիա, Մեծն Բրիտանիա, Հէլ-
լադա, Հունդարիա, Իտալիա, Լիւքսեմբուրգ,
Գառատաղ, Նորվուէկիա, Հոլանտա, Բորթու-
գալ, Բուսանիա, Ռուսիա, Սըրֆ, Շուէտիա,
Չիլիցէր, Թուրքիա, Եփեսոս, Դանճեր և Թու-
նուզ: Այս երկիրները յուղարկելի հատարակ
նամակներն 30 ամսիմ պիտի վճարեն վասն 15
կրամի: Թղթաւորական քարտէսն կարժէ 15

ամսիմ: Լրագիրք և ցոյցեր (schannilion), հինգ
ամսիմ վասն 50 կրամի: Գիտել արժան է որ
երեք կրամը գրեթէ մէկ արամ է:

ՀԵՏՈՒԹԻ ԵՐԴՈՒՄԸ

Հետաքրքրական, գեղեցիկ վեպ մըն է, շարադրեալ
Ամեոկ Աղար գաղղիացի գիտնականէն, եւ քարգ-
մանեալ ի Հայ աշխարհաբար լեզու ի յարգոյ պարոն
Գրի: Մտերեան ուսումնական երիտասարդ Զմիւռ-
նացոյ: Այս վեպն, որ բաղկացեալ է ութամայ 92 է-
րեսներէ, եւ ի յոյս ընծայեալ ի տպարանի Տեռ-
եան, կըվաճառի 5 դուրուշի քուրակազմը:

ՀԻՒԱՆԳԻՆ ԲԱՐԵԿԱՍԸ



ԳԵՂԱՆԱՏԻ ՀԱՂԱՍԻՒՄԻ
ՉԼԱՅՈՒՄ ԶԻՒԱՆԳԻՆԻՆԻՔ

Մարդոյ զգուշութեան (գիւղի) շատ յոգնած ըլլալ
տոկակալ ախտ մըն է և զիջելուն ամենափոքրիկ շարժումը կամ զը-
գուծիւնը վշտալի է յոյժ: վասն զի ուր գտնուի և անոր գե-
ղը: — Միակ դեղը այն է: քիչ խմէ գինի, գարեջուր, և ոգե-
ւեց ընդդէմ: և աւելի աղէկ կըլլայ որ բուրդովին հեռանա ա-
նոցէ, և ամենին չխմու: Իմանալէս խաչ վէ մի խմէր, և ան-
տեղ թեթիւ թէյով (չոյ) գոհ եղէր: Կարելի եղածին չափ մա-
քուր օր ձօն ամեն գիշեր իմ դեղահատերէս երեք կամ չորս հատ
կըլլէ, շատ միս կեր և համեմունք (սոլոյ) հեռի կեցեր: Եթե
այս օգտակար կանոնները ճշգրութեամբ ի գործ դնելու ըլլաւ,
միտքը շուտով պիտի հանգստանայ, մարմնը առողջ պիտի ըլլայ և
պիտի մոռնա թէ զգաց շարժումն ունեցար:

ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆԻՔ ԵՐԻԿԱՍԸՆԸ

Այս գործարանաց վերաբերեալ ամեն հիւանդութեանց մը
թէ կըլլանք շափէն աւելի ընտել կըլլան կամ բաւական չնը-
լար, թէ բարձր կամ աւելի երկարամեայ կը հասնին կամ թէ ա-
նոց մեջուր կը գոյսան մէջքին համապատասխան մար: Այս
ամեն հիւանդութեանց ժամանակը պէտք է Հոլուտէի դեղահատե-
րը առնուլ տպեալ հրահանգաց համեմատ և անոր սպիտակովը լո-
րէ առնուլ տպեալ հրահանգաց համեմատ և անոր սպիտակովը լո-
րէ երկարամեայ վարի կողմը անկողին մտնելու ժամանակը: Այս
գործարանը անմիջական օգնութիւն մի պիտի մատուցանէ, այնինչ ու-
րեւ դեղերը զուր տեղը գործածուած պիտի ըլլան:

ԱՍՏԱՐԵՍԻ ԱՆՈՒՄԻՆԸ

Որ և է դեղ մի չկրնար ստանալ գործութիւնը նորոգել և
աղէկանել զայն շուտով: Ինչպէս այս դեղահատերը, որոնք անպակ-
թանութեան կամ վատթար կերակուրէ պատճառաւ բոլոր թեթ-
ւութիւնը կըլլան և կը հասնին ի լեւորն (բոլոր հէյեր): Ե-
րան գործողութիւնը կը կարգադրեն: Զիջելու սաստիկ եղան-
քով (բոլոր) դեղերը մէջ պանշել ներգործութիւն մի ունի և լեւոր
ու ստանալ ամեն անկարգութիւնները միշտ կը բժշկէ:

ԲՈՐԲՈՒԹԻՒՆ ԹՈՒԳԱՆԱՅԻՑ (ԳԵՂԻՔ) ՀԱՅ ԵՒ
ՀԱՐԲՈՒՄԻ

Հիւանդութեան վերաբերեալ գործարանաց հիւանդութեանց
ամեն ախտն աւելի յաճախ կը պատահի և երբեմն աւելի վատ-
բարձր է: Անոց գործողութեանց անկարգ ընթացքին ստանալն
չնայելու կրնան միշտ կարգադրուիլ Հոլուտէի հաշակաւոր դեղ-
հատից միջոցաւ: Անոց շուտով կը դարմանեն արեան ուր և օ-
թամանակեայ անշարժութիւնը, կըլեմէթընեւ խոցած շնչառնե-
րը, կը բարեկարգեն շնչառութեան սաստիկ արագութիւնը և կը
բողբոյթի իւր կուտան շնչառութեան ու թոքերուն դիւրութեամբ ու կը
նոնաւորապէս գործելու: Այս դեղահատերը՝ իրենց մարդոցան
զօրութեամբ կը սրեն արեւն ամեն աղտոյթութիւններէ, և այս
եղանակաւ կըբարձրեն զգրութիւնը (գիւղի) ընդգէմ ծիւրակն
պիտի, շնչառութեան մէջ պանշել ներգործութիւն մի ունի և լեւոր
ու ստանալ ամեն անկարգութիւնները միշտ կը բժշկէ:

ՏԿԱՐԱՑԵԱԼ ՄԱՐԳԻՆԱՅԻՑ ԲԱՂԿԱՑՈՒԹԻՒՆԻՔ

Տկարութեան, թուրութեան և զգացաւութեան դեղերը
մէջ, որոնք ուր և է ընկան կամ գերբնական շափազանցութեան յո-
ռաջ եկած են, այս դեղահատից պաշտել և նորոգել ներգործու-
թիւնը մեծապէս օգտակար է: քանզի մարդոցութիւնը կըլեմէթս-
տառէ, մարմնոյն ամեն հիւանդութեանը կը կանոնաւորէ, զգուշ-
գրութիւնը կըբարձրեն, հիւանդին միտքը կը յարգարէ և վեր-
պէս առողջութիւնը ձեռք կը բերէ:

Հոլուտէի դեղահատերը ամենէն օգտակար դեղերն են հի-
տեալ հիւանդութեանց համար:
Հիւանդութիւն, Բոլորացաւութիւն, Թորացաւութիւն,
Միախալի ախտ, Տեռաւտութիւն, Ծաւր որովայնի,
Խիթ (սոլոյ), Զրգողութիւն, Մեղադրութիւն,
Հարբուղի, Անմարդողութիւն, Բորբոքում,
Ծիւրական ախտ, Գալուկ, Ախտը ընդերաց,
Թանշ (սոլոյ), Բարեխիւն սրտի, Անկանոնութիւնը կու-
խալ պարանոցի, Գար կամ խիճ միզա- նանց,
Վերանորոգութիւն, Նոցի, Մարմնային հիւանդու-
թիւն, Հիւանդութիւնը Գլխացաւութիւն, Թիւն,
Փողացաւ, Ափրոդիտեան ախտ, Խոցողութիւն:

Գիտել արժան է որ տպեալ հրահանգներ կան ամեն լեզու
որոցմէ մէկ հատ կը գտնուի իւրաքանչիւր տուփին մէջ ի տեղե-
կութիւն հիւանդութեան, ամեն պարագայից մէջ:

Այս դեղահատերը, որ կըլեմէթն Հոլուտէ բժշկին անձն-
կան վերաւորութեամբ, կըվաճառեն իւր գործարանը ի Լո-
տոն, Օքսֆորդ կողմէ փողոցը թիւ 533, ի գին 1 և 1/2 ուկե-
լեւի, 2 1/2 և 1/2 շէլլին տուփը, ըստ մեծութեան տուփ:

ԽԱՐԱԳԻՐ—ՄԵՐ ԼՐԱԳՐՈՅ

Գ. Լ. Գ. Պաշտալէրէն:
Ի ՏԳԱՐԱՆԻ ԱՐՇԱՆՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ